

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԵՎ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Միտելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադիր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *հ*:

- 1) տնօր-նեք, ժպիր-, հեղ-եղուկ
- 2) հեղ-եղել, ամպ-ովանի, ընդ-ուպ
- 3) շնոր-ալի, արհավիր-ք, խոնար-ել
- 4) տարաշխար-իկ, սուր-անդակ, հայթ-այթել

2

Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Վաղորդյան աղջամուղջը հետզհետե ան-ացավ(1)՝ իր տեղը զի-ելով(2) արևի շառագույն ճառագայթների: Բնությունը զար-նեց(3): Ծառերի և ծաղիկների սաղար-ների(4) նստած ցողը մեղմ-րեն(5) գոլորշիացավ, և յուր-րինակ(6) փայլով շողշողաց մուգ կանաչ բուսականությունը: Պ-նված(7) սալորենին նագեց՝ ասես համբույր ու-արկելով(8) ճյուղերին թառած արագիլների: Արթնացան նաև ծաղիկ-ները՝ զինարբու-ր(9), սուսա-բարը(10), վարդը:

- 1) 3-թ, 6-օ, 9-կ, 10-ն
- 2) 1-է, 5-ո, 8-դ, 10-ն
- 3) 2-չ, 3-թ, 7-ճ, 9-կ
- 4) 1-է, 4-թ, 7-ճ, 9-կ

3

Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:

- 1) ՊԻՐԵՆԵՅԱՆ ԹԵՐԱԿՂՁԻ, ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՍԱՍԱՆՅԱՆ ՏՈՂՄ
- 2) ՇԻՐԱԿԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՆՈՅԻ ՏԱՊԱՆ, ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
- 3) ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՈՆ, ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՍԱՐԱՆ, ՋԻԲՐԱԼԹԱՐԻ ՆԵՂՈՒՅ
- 4) ՊԱՆԱՍԱՅԻ ՋՐԱՆՅՔ, ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏ, ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ

4

Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:

- 1) վարչակարգ, շրջադարձ, այգաբաց
- 2) մտացածին, երփներանգ, հոգատար
- 3) լծորդություն, բրգաձև, արտերկրացի
- 4) վայրկենական, ուխտադրուժ, մանրանկար

5

Ո՞ր տառակապակցությունը թվային արժեք *չունի*:

- 1) Ռ-Ղ
- 2) ՀԹ
- 3) ՇԾ
- 4) ԺԿ

6

Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի *ը*-ն ճիշտ տեղադրված:

- 1) դստ(ը)րիկ, հագն(ը)վել
- 2) կ(ը)րկնել, հանգց(ը)նել
- 3) քն(ը)նվել, փ(ը)րկվել
- 4) կտ(ը)րվածք, հայտ(ը)նվել

7

Ո՞ր տարբերակում է *գորոշյան հանգույցը կտրել* դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:

- 1) լուծել դժվարին, խճճված խնդիրը
- 2) սյարգաբանել հարաբերությունները
- 3) հեռանալ բարեկամներից
- 4) ենթարկվել դաժան դատաստանի

8

Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

ա. Խոսքը (1. վերաբերվում, 2. վերաբերում) է մեր օրերի հերոսներին:

բ. Ժամանակն այդպես էլ չսպիացրեց նրա հոգում մնացած (1. խարամը, 2. խարանը):

գ. Օրակարգում ներկայացված ոչ մի հարցի շուրջ (1. միացյալ, 2. միասնական) որոշում չկայացվեց:

դ. Որոշվեց հիվանդի վիրահատությունը կատարել (1. տեղային, 2. տեղական) անզգայացումով:

- 1) ա -2, բ -2, գ -2, դ -1
- 2) ա -1, բ -2, գ -1, դ -1
- 3) ա -1, բ -1, գ -2, դ -2
- 4) ա -2, բ -1, գ -1, դ -2

9

Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:

- 1) հակիրճ-ծավալուն, վեհանձն-փոքրոգի, փութկոտ-շտապ
- 2) խաղաղ-անհանգիստ, նենգ-ազնիվ, վարժ-փորձառու
- 3) կիզել-հանգցնել, սուրբ-ալիք, ականակիտ-պղտոր
- 4) քաջալերել-վիատեցնել, լաջվարդ-կապույտ, հաղթել-սպարտվել

10

Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:

- 1) սողոսկել - մեկի դեմ դավեր լարել, ընկեցիկ - ծնողներից լքված երեխա
- 2) ռահվիրա - որևէ բանի սկզբնավորող, սոչորել - սաստիկ ծարավով տանջել
- 3) քանքար - բնատուր ձիրք, սողնակ - դուռը փակելու ձող
- 4) ձյունագես - սպիտակ մազերով, մածուցիկ - կաշուն հասկություն ունեցող

11

Տրված բառերից որի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *ընդ-* նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:

- 1) հակառակ
- 2) առաջնորդ
- 3) ամենասուր
- 4) հպանցիկ

12

Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) աներկբայորեն, ակնածանք, վայրէջք
- 2) կարգապահական, խորաքնին, սրտմաշուկ
- 3) խելահեղություն, խմբագրատուն, վերջնախաղ
- 4) բնագիտական, անընդգրկելի, բանտարկյալ

13

Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:

- 1) երկնաքեր, սևամորթ, նետաձիգ, պատճեն
- 2) հայագետ, գործագուրկ, մարդասեր, ծաղկաթերթ
- 3) տեսակետ, օրացույց, շարասյուն, ռուս
- 4) օրինազանգ, ժանր, նախագահ, անտառահատ

14

Ո՞ր շարքում տրված տեսակին *չպատկանող* դերանուն կա:

- 1) երբ, ուր, ով, ինչպես - *հարաբերական*
- 2) դա, մյուս, այսչափ, այնտեղ - *ցուցական*
- 3) ուրիշ, այլ, որոշ, ինչ-որ - *անորոշ*
- 4) ողջը, նույն, բոլորը, ամեն ոք - *որոշյալ*

15

Ո՞ր նախադասության մեջ հողի գործածության սխալ *չկա*:

- 1) Անահիտն երագում էր ամեն գնով նվաճել երիտասարդի սիրտը:
- 2) Կանչենք այն մարդկանց, որոնք սպասում են իրենց մրցանակներին, պարգևներին կամ որևէ այլ նվերին:
- 3) Ամռան երկար օրերին էլ արևն հագիվ մի քանի ժամ է լույս տալիս Մթնածորի անտառներին:
- 4) Անտոնը աղվեսին զցեց ուսին, ես մոշահավերը վերցրի, և մենք վերադարձանք:

16

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* հոլովման:

- 1) կղզի, բանալի, Աստված, տատ
- 2) այգի, արարել, թերակղզի, երեխա
- 3) ոզնի, պատանի, հայրողի, ամուսին
- 4) անկողին, ձի, կիրակի, մարդ

17

Ո՞ր շարքում են միայն պարզ ժամանակաձևեր:

- 1) չի գրի, սիրեմ, պետք է ժպտաս
- 2) մի՛ խոսիր, եկել եմ, բաց թողեց
- 3) պիտի նայես, աղո՛թք արա, դուրս եկավ
- 4) հավատացել էի, մի՛ հիշիր, կանգ առա

18

Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:

- 1) Քաղցից ու թշնամուց հալածված գաղթականները վերջապես անցան Արաքսը:
- 2) Արշալույսի բոսոր ճառագայթները արտացոլվել էին ծովի բեկբեկուն ալիքների մեջ:
- 3) Աղջիկը անծանոթ քաղաքի ծուռումուռ փողոցներում մոլորվել էր:
- 4) Հակառակ այդ անհաջողությանը՝ Արամը չէր վիսատվել:

19

Ո՞ր շարքի բոլոր բայերն են սահմանական եղանակի:

- 1) չի որոշվի, խոսում եմ, եկել է, մոտեցրի
- 2) չասաց, գտնելու եմ, գնացել էինք, կաս
- 3) տալիս է, կամենում ես, ցանկանք, փախավ
- 4) գալիս եմ, չբերեր, ուզել էր, հիշում էի

20

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ստորադասական շաղկապներ:

- 1) թեկուզ, հենց որ, ինչ, նախքան
- 2) քանի դեռ, որտեղ, թեպետ, չնայած
- 3) թեև, եթե, քանի որ, որպեսզի
- 4) որովհետև, մինչդեռ, թե չէ, սակայն

21

Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:

- 1) Դու ես այդ բոլոր առաջարկներն արել:
- 2) Ժողովուրդը հեքիաթների մեջ է արտահայտում իր իղձերը:
- 3) Փոքր գրողները հավերժական հանճարների լուծը կրողն են:
- 4) Հայ ժողովուրդը միշտ պետք է բարձր պահի ազգային արժանապատվությունը:

22

Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

..... հետո կադնին տապալվել էր՝ հետ տանելով ու բնության հրաշք հուշարձանը:


(1. պատմություն, 2. ստեղծել, 3. տարի, 4. ինքը)

- 1) 2, 1, 4, 3
- 2) 3, 1, 2, 4
- 3) 2, 4, 3, 1
- 4) 3, 4, 1, 2

23

Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Երբ դասաժամը վերջացավ, և աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ շատ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի երգ երգեն:



24

Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Իմ բոլոր մտքերն ու հույզերը դարձել է մի մեծ ցանկություն, և ես այլ բանի մասին չեմ կարողանում մտածել:
- 2) Մեզ անհրաժեշտ էին բոլոր հանգամանքների և բոլոր մանրամասների ստուգումների արդյունքը:
- 3) -Մեզ՝ իբրև ճշտապահ ծառայողներ, ուշ թե շուտ կնկատեն և կխրախուսեն,- հուսադրում էր Գևորգը հավաքվածներին:
- 4) Մտատանջությունների վերջին հյուլեն միանգամից և ամբողջությամբ անհետացավ նրա հոգուց:

25

Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված բարդի:

- 1) *Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ աշխարհիկ կեղծավորությամբ կիսով չափ ապականված այդ հազվագյուտ մանուշակը, այլևս չի հուզում Համլետի սիրտը:*
Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ այդ հազվագյուտ մանուշակը, որ աշխարհիկ կեղծավորությամբ կիսով չափ ապականված է, այլևս չի հուզում Համլետի սիրտը:
- 2) *Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է իր բնակիչների դյուրաբորբոք բնավորությամբ:*
Էթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է նրանով, որ իր բնակիչները դյուրաբորբոք բնավորություն ունեն:
- 3) *Ուսուցչի ներս մտնելուց հետո երեխաների զվարթ աղմուկը դադարեց:*
Հենց որ ուսուցիչը ներս մտավ, երեխաների զվարթ աղմուկը դադարեց:
- 4) *Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերը իշխանի գեղանի դստեր հետ ամուսնանալու երազանքով էին հաճախում Գարդման:*
Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերը Գարդման էին հաճախում, որովհետև երազում էին ամուսնանալ իշխանի գեղանի դստեր հետ:

26

Ո՞ր նախադասության մեջ միջոցի անուղղակի խնդիր կա:

- 1) Նա գիտեր, որ անցյալ տարվա օրացույցով հունիսի տասնմեկը կիրակի էր:
- 2) Բոլոր երկրներում մարդիկ սիրով են դիմավորում Նոր տարվա գալուստը:
- 3) Ես եկել եմ այն վերջնական եզրակացության, որ մարդիկ հիանում են իրենց չունեցած հատկություններով:
- 4) Ժայռերի ստվերոտ կողերը մամուռով են պատված. ջրերը թռչում են վերև, հասնում նրանց:

27

Ո՞ր նախադասության մեջ պատճառի պարագա չկա:

- 1) Ազնի՛վ եղիր ամեն ինչում. Ո՞վ է կյանքում սովից մեռել:
- 2) Լեզվին լավ չտիրապետելով՝ դժվարանում էր հաղորդակցվել դրացիների հետ:
- 3) Ինչո՞ւ իզուր հանգցնում ես Ջահել կրակն աչքերիդ:
- 4) Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին, Թե չլինեն կինն ու գինին:

Նշվածներից ո՞րը չկա ստորև բերված հատվածում (հատվածը կետադրված չէ):

*Այդ վայրկյաններին նրա աչքերը ցուցյում էին քամին մեղմորեն ծածանում էր թավշ-
յա մազերը ուրցի ծաղիկներով զարդարուն փոփոսցնում դարձածալքերով շորը ընդ-
գծելով վտիտ մարմինը: Մարանը ուրցի բույրով այդ աղջիկը սլացիկ հասակով մեկ
կանգնում էր և անէացած նայում լուրթ երկնքին: Ներամփոփ հագիվ նկատելի նյար-
դային շարժումով նա անընդհատ հյուսում-քանդում էր ծամերը:*

- 1) տրոհվող որոշիչ
- 2) տրոհվող հատկացուցիչ
- 3) դերբայական դարձված
- 4) բացահայտիչ

**Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապա-
տասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ
հաջորդականությանը:**

1. Տաք երեկոներին մինչև իսկ բացօթյա քնում էի տատիս նվիրած թաղիքի վրա:
2. Այդ պատճառով էլ ամբողջ ամառ ես այգում էի անցկացնում, բացի, իհարկե, անձ-
րևոտ օրերից:
3. Երբեմն տատս էլ էր քնում այգում. մի խուրձ խոտ էր բերում, փռում իմ օթևանի մոտ,
պառկում ու երկար-բարակ որևէ բան էր պատմում:
4. Ես սիրում եմ մոտ գտնվել բնությանը, իսկ հնարավորության դեպքում փորձում եմ
շատ վայելել նրա պարզևած հաճելի խաղաղությունը:

- 1) 1, 4, 3, 2
- 2) 4, 2, 1, 3
- 3) 1, 2, 3, 4
- 4) 4, 1, 2, 3

Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Նրա ժպիտը մեղմ էր ու դողդոջ,
Որպես լուսնյակի ժպիտը տխուր.
Նա չուներ խոցող թովչանքը կնոջ.
Նա մոտենում էր որպես քաղցր բույր...*

- 1) մակդիր
- 2) համեմատություն
- 3) բաղաձայնույթ
- 4) հանգավորում

31

Ո՞ր տողն է Նահապետ Քուչակի «Ես աչք ու դու լոյս, հոգի» հայրենից:

- 1) Աստղերն այլ կոճակ արե՛ք, զիս ի ներս ողկիկ շարեցե՛ք:
- 2) Ապա յիմ սրտես ի դուրս՝ յերկրրէ յերկիր թափեցաւ...:
- 3) Երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի:
- 4) Երեկ ցորեկով բարով տանեին մէկ եար մի ճորով...:

32

Ինչի՞ նկարագրությամբ է սկսվում Ա. Բակունցի «Ալպիական մանուշակ» պատմվածքը:

- 1) ալպիական մանուշակների
- 2) Բակուր իշխանի դամբարանի
- 3) Կաքավաբերդի
- 4) Բասուտա գետի

33

Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի դրվագներից ո՞րը բազմամարդ տեսարան չէ:

- 1) Անուշի խելագարության տեսարանը
- 2) Սարոյի մոր ողբը
- 3) Համբարձման տոնը և վիճակ հանելը
- 4) Սարոյի և Մոսիի կոխ բռնելը

34

Տրված հատվածներից ո՞րն է Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմից:

- 1) Ե՛վ անապատում, և՛ հավերժական
Անուրջում հոգիս կլսե, կզգա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ մեղմ կզգվե տատասկին դժնյա:
- 2) Գնա՛, քարավա՛նս, ինձ հետդ քա՛շ տուր
Օտար, ամայի ճամփեքի վրա.
Ուրտեղ կհոգնիս, գլուխս վա՛ր դիր
Ժեռ-քարերի մեջ, փշերի վրա:
- 3) Գիշերն ասարկու՛՛ և՛ սև, և՛ հսկա, մի չղջիկի պես թևերը փռեց,
Անձիր թևերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն անափ:
- 4) Ո՛չ իշխանություն, ո՛չ կռիվ, ո՛չ կին
Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:
Ղողանջն է միայն ձիգ քարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Հրապույրներով դյուրում իմ հոգին

35

Ըստ «Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր)՝ ի՞նչ պայման են կապում Մեծ Միերը և Մըսրա Մելիքը:

- 1) Ում տերությանը վտանգ սպառնա, մյուսը նրան գորքով օգնության հասնի:
- 2) Ով հաղթի մենամարտում, նա դառնա և՛ Մասունի, և՛ Մըսրա թագավոր:
- 3) Ով շուտ մեռնի, նրա ընտանիքին տիրություն անի մյուսը:
- 4) Ով կարողանա հաղթել Սպիտակ Դևին, մյուսը նրան հարկ վճարի:

36

Ո՞ր ստեղծագործությունը հեղինակներից որինն է:

- | | |
|-----------------------|----------------|
| ա. «Այրին» | 1. Լ. Շանթ |
| բ. «Հին աստվածներ» | 2. Մ. Մեծարենց |
| գ. «Վայրկյան» | 3. Գ. Ջոհրապ |
| դ. «Արտերուն հրավերը» | 4. Դ. Վարուժան |

- 1) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 2) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 3) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 4) ա-4, բ-1, գ-3, դ-2

37

Գ. Դեմիրճյանի «Վարդանանքում» ի՞նչ է պատասխանում Վարդան Մամիկոնյանը Աթրլի այն հարցին, թե արդյոք հոների համար Հայաստանի վրայով կա ճանապարհ դեպի Բյուզանդիոն:

- 1) Ասում է, որ ճանապարհ կա, բայց վերադարձ չկա՝ ակնարկելով Աթրլի՝ իր հետևից թողած սովը:
- 2) Նկատելով բյուզանդացի գորավար Անատոլի ներկայությունը՝ հրաժարվում է ճանապարհ տրամադրելուց՝ խուսափելով Բյուզանդիայի հետ առանց այն էլ բարդ հարաբերությունների հետագա վատթարացումից:
- 3) Միրով խոստանում է ճանապարհ՝ առաջարկելով հայոց ջերմ ընդունելությունն ու աջակցությունը:
- 4) Հոների համար դեպի Բյուզանդիոն տանող ճանապարհը համարում է մշտապես բաց, եթե նրանք դաշինք կնքեն հայերի հետ՝ ընդդեմ պարսից սպասվող պատերազմի:

38

Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

1. Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում
 2. Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր
 3. Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր
 4. Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր
- 1) 1, 4, 3, 2
 - 2) 3, 2, 1, 4
 - 3) 1, 3, 2, 4
 - 4) 3, 2, 4, 1

39

**Տրված բառերից քանի՞սն ունեն հետևյալ կազմությունը՝
*արմատ+հոդակապ+արմատ.***

հողմահալած, ամենահաս, տարատեսակ, դռնեղուռ, հարկատու, դավանափոխ, մանրագնին, այրուձի, գորովագութ, մեղմանուշ:

40

Տրված բառերից քանիսի՞ր բոլոր վանկերն են բաց.

ծառուղի, հայրենի, բացակա, եզակի, փայտյա, գտածո, հիրավի, գետածի, մարտավկա, մեծարգո, կատաղի, քաջարի:

41

Նախադասություններից քանի՞սն են ընդարձակ:

- Կկոտորեն հայրենիքն ուրացողներին:
- Ուրեմն ելի՛ր, ժողովո՛ւրդ:
- Հասել է օրը կենաց ու մահու կռվի:
- Մենք ենք դուրս գալու թշնամու դեմ:

42

Տրված հատվածում քանի՞ ածական կա:

Վերադառնալով խոհանոց՝ Մեսրոպը մետաղե պահարանից ստացավ պետերի համար միայն գործածելի փոքր չափսի պղնձամանը, ընտրեց իր ուզած միսը և անցավ գործի: Երկու ժամ անց ամենաբութ քիթն անգամ չէր կարող չզգալ ախորժելի ճաշի հաճելի բույրը: Մեսրոպն ուզեց ինչ-որ կերպ անվանել իր զարմանալի կերակուրը, որը կարողացավ խլացնել վիթխարի կաթսաներում խաշվող սառած կաղամբի ու կարտոֆիլի տհաճ հոտը:

43

Տրված ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Պ. Սևակը.

«Կուզեի նստել մի քարի վրա», «Եղիցի լույս», «Մարդը ափի մեջ», «Մարդ էլ կա, մարդ էլ», «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին», «Խոսք իմ որդուն», «Վարք մեծաց», «Դեպի լյառը Մասիս», «Անլռելի զանգակատուն»:

44

Քանի՞ բութ պիտի դրվի տրված հատվածում:

Նորընծա վարպետ Սկրտչի բարեհամբույր մայրը նախօրոք որոշել էր երբ որդին դառնա ուստա անմիջապես ամուսնացնի: Որոշվեց այսպես Սկրտիչը պետք է իր կառուցած աղբյուրի բացման հաջորդ օրվա լուսաբացին թաքնվի աղբյուրի մոտ տեսնելու աղջիկներից ով է առաջինը ջուր վերցնելու ով լինի առաջինը նա էլ կդառնա ուստայի կինը:

Ո՞ր հատվածներն են միջին հայերենով:

1. Դըռանս առջև կը նըստիմ միշտ տըխրալիր,
Լուր կ'ուզեմ վրադ ամեն կռունկե՝ որ կ'անցնի:
2. Ջիմ եարն ամանաթ կու տամ.
ի վարդին մէջն պահեցէք.
Թէ երթամ ու շուտով դառնամ,
զամանաթս ի տէ՛ր հասուցէք...
3. Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելանէր,
Ընդ եղեգան փող բո՛ց ելանէր,
4. Դու տեր համորեն երկնի և երկրի,
Իսկ ես չեմ իշխում շնչիս ու հոգուս...
5. Մեծցայ, սիրու տէր եղայ,
երեսիս գոյնըն կու գընայ.
Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,
որ սիրուն քարըն չի դիմնայ...

Ո՞ր նախադասություններում է ընդգծված բառը գործածված փոխաբերական իմաստով:

1. Միմոնը **մեխվել էր** Սոնայի տան մոտ, և նեղվածք ու ցուրտ էր, և ձգող ոչ մի տաք անկյուն չկար:
2. Խճուղու երկու կողմում ձգվում են խիտ ու բարձր ծառերի զույգ **պատերը**:
3. Չյունածածկ լեռան բարձունքին **քազմել էր** հիմնավորց ամբողջը:
4. Քարերը գլորվում էին դեպի **խորխորատները**, և նրանց աղմուկից ճերմակափետուր աղավնիները անհանգիստ ճախրում էին:
5. Մի զարմանալի թախծոտ կյանք էր **կանաչում** դեմը:

Ո՞ր շարքերում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ կա:

Ինձ դիմավորեց գունատ դեմքով մի պատանի և առաջնորդեց ուրիշ սենյակ, և այդ վայրկյանին այնտեղից արագ քայլերով ընդառաջ եկավ մի կարճահասակ ծերունի:

1. **եկավ** – անկանոն բայ, չեզոք սեռ, **ուրիշ**-անորոշ դերանուն
2. **ինձ** – անձնական դերանուն, սեռական հոլով, **դիմավորեց** – **է** խոնարհման պարզ բայ
3. **մի** – անորոշ դերանուն, **վայրկյանին** –**վա** հոլովման գոյական
4. **արագ**-ձևի մակբայ, **առաջնորդեց** – սահմանական եղանակ, պարզ ժամանակածև
5. **այնտեղից** – ցուցական դերանուն, **գունատ** -ածական

48

Նախադասություններից որոնցում է ընդգծվածը դերբայական դարձված (նախադասությունները կետադրված չեն):

1. Գիշերվա կեսին **սարսափած քաղաքացիները** դուրս են թռչում տներից:
2. Այդ պատերից **բավականին հեռու գտնվող** վայրերում ևս խոսում էին այդ դեպքերի մասին:
3. Մանրավաճառները անգամ **շունչ քաշելու** ժամանակ չունեն:
4. Հարևանները **նրան տեսնելով** հարգալից բարևում են:
5. Սիրում է **հասարակական գործունեությամբ զբաղվել:**

49

Վ. Տերյանի ստեղծագործության վերաբերյալ պնդումներից որո՞նք են ճիշտ:

1. «Հրաժեշտի գազելում» բանաստեղծը տխրությամբ հրաժեշտ է տալիս իր սիրած էակին, որից պետք է անորոշ ժամանակով բաժանվի:
2. «Մթնշաղի անուրջներ» շարքը սկսվում է «Տխրություն» բանաստեղծությամբ:
3. «Fatum» բանաստեղծության մեջ սիրող սրտերը համեմատվում են երկնքի աստղերի հետ, որոնք թեպետ հեռու են իրարից, բայց միշտ կարոտավառ երագում են իրար:
4. «Որպես Լաերտի որդին» բանաստեղծության մեջ հեղինակն իրեն համեմատում է երկար դեզերումներից հետո հայրենիք վերադարձող հոմերոսյան հերոսի հետ:
5. «Երկիր Նաիրի» շարքը բացվում է «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին» բանաստեղծությամբ:

50

Նշել այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ կա:

1. հապշտապ, 2. դիցուկ, 3. խորդուբորդ, 4. խառնիճաղանջ, 5. հանդիպակած,
6. թղպամած, 7. բագրիք, 8. համպատրաստից, 9. այբենական:

Բ մակարդակ

51

Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) տարեց(տարի), տեր(Սահակ), ըստ(իս), մի(երկու)
- 2) դեմ(հանդիման), կողք(կողքի), ի(դեպ), Սանկտ(Պետերբուրգ)
- 3) գնալ(հասնել), բուս(առ)բուս, ձեռք(բերում), ալ(կարմիր)
- 4) ի(զուր), առ(այն), ծիլ(տալ), երեքից(չորս)

52

Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է բազմավանկ:

- 1) սկզբնական, փախստական, ավարառու
- 2) դրույքաչափ, տղամարդ, ուղեվճար
- 3) փափկասուն, բազմազբաղ, ալեծուփ
- 4) փոշեկուլ, մանրախնդիր, մշտադալար

53

Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) բերկրավետ-ուրախալի, մտմտալ-խորհել
- 2) սնապարծ-գոռոզամիտ, ծվատել-հոշոտել
- 3) ակնապիշ-սևեռուն, դեզ-հարդ
- 4) գավաթ-ըմպանակ, փորձանք-պատուհաս

54

Ո՞ր շարքում կրկնավոր բարդություն *չկա*:

- 1) մագ-մորուք, կաս-կարմիր, ձյուն-ձմեռ
- 2) դիլ-գուռնա, գիշեր-ցերեկ, ծիլ-ծաղիկ
- 3) ձայն-ծպտուն, առք-փառք, այսօր-վաղը
- 4) լավ-վատ, մանր-մունր, դեղ-դարման

55

Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա*:

- 1) Ժպիտը մարդ գույներով գծագրվում էր նրա դեմքի վրա և իսկույն անհետանում:
- 2) «Գուցե մի նոր հյուր են բերում», - չարախնդաց բանտապետը:
- 3) Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա:
- 4) Ես վստահ էի, որ ամեն առավոտ նրան կհանդիպեմ հենց նույն տեղում:

56

Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:

- 1) Կուշտ կերած մեր ձիերը սկսեցին բարձրանալ քարոտ արահետով՝ մեկը մյուսին հրմշտելով:
- 2) Հեռվից դիտողին ծովը մարգարտե ցող է թվում՝ պատած երեքնուկի թերթիկներով:
- 3) Ամպերը ճերմակ երամով անցան, իմ սիրտն է լալիս կարոտով անհուն:
- 4) Գիտեինք միայն, որ քեռիս զինվոր եղած ժամանակ ընդդիմացել է:

57

Ո՞ր շարքի բոլոր բառերն են համապատասխանում նշված տեսակին:

- 1) առթիվ, որևէ, ի փառս – *քերականական*
- 2) հոգաբարձու, ամենայն, թեպետ – *նյութական*
- 3) գոնե, շնորհիվ, անգամ – *վերաբերմունքային*
- 4) մինչև, հանձինս, չնայած որ – *քերականական*

58

Ո՞ր տարբերակում հատկացուցիչ չկա:

- 1) Ահա եկել հավաքվել են Կտրիճները Կովկասի:
- 2) Սենավոր իմ սիրտ, մոլորված թռչուն, Կարոտիդ կանչը չի հասնի նրան:
- 3) Կմոռանամ հեռվի աղմուկը ահեղ, Կզգամ համբույրը ուրիշ օրերի:
- 4) Է՛յ դու, ջահել, հպարտ հասակ, Անցար ոսկի ամպի պես:

59

Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

-Անկարելի է,- պատասխանեց ծերունին տղային.- եթե թողնեմ, էլ երբեք չեմ տեսնի աղջկաս. դու էլ մնա՛ մեզ մոտ և շուտով կմոռանաս քո տխուր երկիրը:

- 1) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է, եթե նա թողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան. նա էլ մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:
- 2) Ծերունին տղային պատասխանեց, որ անկարելի է. եթե թողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան. ինքն էլ թող մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իրենց տխուր երկիրը:
- 3) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է. եթե թողնի, էլ երբեք չի տեսնի նրա աղջկան. նա էլ թող մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:
- 4) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է. եթե ինքը թողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան. նա էլ թող մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:

60

Ո՞ր տարբերակում է ստորադաս նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Գու, որ այդպես էլ չհասկացար աշխարհի չարն ու բարին, այժմ դատապարտել ես քեզ կատարյալ մեղության: (*բացահայտիչ*)
- 2) Ջորավարը խորհում էր այն մասին, որ պալատում իր թշնամիները կարող էին արքայի առաջ չարախոսել իրեն: (*վերաբերության անուղղակի խնդիր*)
- 3) Տեղ հասնելու առաջին իսկ օրից Սմբատ Բագրատունին ուշիուշով հետևում էր, թե ինչ է կատարվում մայրաքաղաքում: (*հանգման անուղղակի խնդիր*)
- 4) Ինչի՞ց է, որ ամեն անգամ մենք բաժանվելիս վիճում ենք: (*պատճառի պարագա*)

61

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում ցույց է տրված, թե ինչպես ամենաձանր հալածանքների պայմաններում անգամ մարդը փորձում է պահպանել մարդկային արժեքները:
- 2) Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի ավարտին գոհվում են կովի բոլոր մասնակիցները՝ գայլը, մայր ձին և քուռակը:
- 3) «Այնինչ՝ նիրհում է աստված իր հոգում» տողում խտացված է Հ. Շիրազի «Բիբլիական» պոեմի բովանդակությունը:
- 4) Մասրենին Հ. Մահյանի համանուն բանաստեղծության մեջ խորհրդանշում է հայ ժողովրդի տոկունությունը:

62

Հ. Պարոնյանի նշված ստեղծագործություններից ժանրային առումով ո՞րն է նովելների շարք:

- 1) «Ազգային ջոջեր»
- 2) «Քաղաքավարության վնասները»
- 3) «Պաղտասար աղբար»
- 4) «Մեծապատիվ մուրացկաններ»

63

Նախադասության անդամներից քանիսի՞ շարահյուսական պաշտոնն է ճիշտ նշված:

Չինացիները խոսում են իրարից խիստ տարբեր յոթ բարբառներով, որոնք բոլորովին էլ հասկանալի չեն այլ բարբառով խոսողին:

- **բոլորովին** - որոշիչ
- **որոնք** - ենթակա
- **այլ** – որոշիչ
- **հասկանալի չեն** – պարզ ստորոգյալ
- **խիստ** – չափի պարագա

Տրված բառերից քանի՞սն են կազմությանը պարզ.

հավատ, հրավեր, բարիք, դժխեմ, հասուն, դայրոց, եկեղեցի, դաշույն:

Մտքերից քանի՞սն են հակասում տեքստի բովանդակությանը կամ չեն բխում նրանից:

Դարեր շարունակ մարդիկ փորձել են ստեղծել տարածության չափման միավորներ: Ոտնահետքերի միջև եղած հեռավորության չափումից առաջացել է ոտնաչափը, արմունկից մինչև միջնամատի ծայրը չափից՝ կանգունը և այլն:

Դրանցից մեծ միավորների առաջացումը կապվում է հողաբաժանման հետ. հողագործը պետք է համոզված լիներ, որ իր հողակտորը իրեն հասանելիքից ավելի փոքր չէ: Մկզբնական շրջանում ոտնաչափերով չափվող հողակտորներն ակնհայտորեն անհավասար էին, քանի որ չափողի հասակից կախված՝ ոտնաչափը կարող էր տարբեր լինել: Բավական երկար ժամանակ չափման խնդիրը լուծել է եգիպտական կանգունը, որի չափը սահմանվեց ըստ թագավորի բազկի երկարության: Դրա գրանիտե բնօրինակը պահվում էր պալատում:

Այնուհետև ֆրանսիացի հեղափոխականները ստեղծեցին մետրը, որի՝ որպես չափման միավորի, հիմքում դրված էր Հյուսիսային բևեռից մինչև հասարակածն ընկած հեռավորության 10 միլիոներորդ մասը:

Արեգակնային համակարգում չափումներ իրականացնելու համար չափման միավոր ընդունվեց Երկրից մինչև Արեգակ միջին հեռավորությունը: Ավելի մեծ տարածությունների համար օգտագործվում է լուսատարի հասկացությունը: Դա այն հեռավորությունն է, որը լույսն անցնում է մեկ տարվա ընթացքում բացարձակ վակուումում:

- Գոյություն ունեցող չափման միավորների առաջացման հիմնական դրդապատճառներից մեկը կապվում է հողագործության հետ:
- Եգիպտական կանգունը հավասար էր մեկ ոտնաչափի:
- Ֆրանսիացի հեղափոխականների առաջարկած մետրը կազմում է հասարակածի 10 միլիոներորդ մասը:
- Երկրից մինչև Արեգակ միջին հեռավորությունը մեկ լուսատարի է:
- Ֆրանսիական հեղափոխության տարիներին մարդկությանը հայտնի էր, թե որքան է հեռավորությունը Հյուսիսային բևեռից մինչև հասարակած:

66

Ո՞ր նախադասություններում ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

1. Հանկարծ ծոցից հանելով տետրը սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը օջախի մոտ նստած աչքերը օջախի քարին:
2. Ջարմանում են ինչպես կարողացավ նա գոյատևել գտնվելով թշնամական և օտար միջավայրում:
3. Այնտեղ մթին թավուտների խորքերում կա մի լքված խրճիթ:
4. Այդ ամենի հողածածկ կտուրներով տների ու գյուղական խորհուրդը ճամփաների կարտուն էր զգում մշտապես:

67

Որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի)։

1. հագնել, 2. խառնել, 3. թողեք, 4. նեղսրտեց, 5. վերածնել, 6. ցատկոտեց,
7. կորցրած, 8. գոհանանք, 9. կորանք:

68

Ո՞ր բառերում արմատի հնչյունափոխություն կա.

1. արարչագործ, 2. տամկանալ, 3. ուսուցչություն, 4. ակնկոր, 5. միջնաբերդ,
6. կուտակել, 7. ժողովրդական, 8. շառագունել, 9. մշակութային:

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. Բոլոր ցուցական դերանունները հոլովվում են գոյականից տարբեր ձևով:
2. Բոլոր անձնական դերանունները թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերում հոլովվում են գոյականից տարբեր ձևով:
3. *Ոմն* դերանունը հոլովվում է միայն եզակի թվում:
4. Ոչ բոլոր փոխադարձ դերանուններն են հոլովվում:
5. Բոլոր հոլովվող որոշյալ դերանունները ենթարկվում են գոյականական *ի* հոլովման:
6. Առարկա ցույց տվող բոլոր դերանունները նախադասության մեջ կարող են դառնալ ենթակա:

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է*, *Միայն է*, *Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. *Յու* երկինչունը հնչյունափոխվելիս կարող է *և*՝ դառնալ գաղտնավանկի *ը*, *և*՝ սղվել:
2. Բառասկզբի *ը*-ն կարող է հնչյունափոխվել:
3. Բառասկզբի *ի*-ն շեշտից զրկվելիս միշտ հնչյունափոխվում է:
4. *Ու*, *ի*, *է(ե)* ձայնավորները հնչյունափոխվելիս կարող են վերածվել բաղաձայնների:
5. *Ույ* երկինչունը կարող է հնչյունափոխվել միայն *ու*-ի:
6. Բառասկզբի *է* ձայնավորը հնչյունափոխվելիս կարող է դառնալ *ի*: